ԿՐԿԻՆ ՀԱՂԱՐԾՆԱՁՈՐԻ ԹԵՎԱՎՈՐ ԽԱՉՔԱՐԻ ՄԱՍԻՆ

ԱՇՈՏ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

Հաղարծնավանք բարձրացող ճանապարհի 2-րդ կիլոմետրին, ձախ մասում՝ հանգստի գոտում, կանգնեցված է թևավոր խաչքար (չափերը՝ 200 X 101/3 X 30/32 սմ): Հանգստավայրի սեփականատեր Ռազմիկ Սահակյանի պատմելով՝ թևավոր խաչը 1998/9 թ. բերվել է Պորտավոր կամ Պորտասար կոչվող վայրից, որը գտնվում է Հաղարծնի վանք տանող հին ճանապարհին՝ խաչքարի ներկայիս հանգրվանից 2 կմ հեռու: Այն ընկած է եղել գետնին՝ ծածկված հողով, երևացել է միայն մի թևը: Ռ. Սահակյանը տրակտորով զգուշությամբ հանել է, անխաթար տեղափոխել ու տեղադրել այդտեղ:



Բազալտից կերտված խաչքարն ուսումնասիրել և արձանագրությունը հրատարակել են Ա. Քալանթարյանը, Հ. Մելքոնյանը, Գ. Սարգսյանը[1]: Նրանց իրազեկմամբ՝ «Հայաստանում քրիստոնեության տարածման տարիներին Գրիգոր Լուսավորիչը ավերված հեթանոսական սրբավայրերում և քարոզիչների նահատակության տեղերում որպես նոր հավատի խորհրդանիշ կանգնեցնում է փայտյա խաչեր: Շուտով սրանց փոխարինում են քարե նույնատիպ կոթողները: Այս քարակերտ խաչերը մեծ

[1] Տե՛ս **Ա. Քալանթարյան, Հ. Մելքոնյան, Գ. Սարգսյան,** Նորահայտ թևավոր խաչեր Իջևանից, «Տավուշ. նյութական և հոգևոր ժառանգություն, հանրապետական գիտական նստաշրջանի նյութեր», Եր., 2009, էջ 270-276:

տարածում են գտնում հատկապես V-VII դդ.: Խաչքարի այս տիպը գոյատևվում է նաև հետագա դարերում, ընդհուպ XVII դ.՝ ստանալով լայն տարածում: Զարգացած միջնադարում այս կոթողների բավականին թվով նմուշներ հանդիպում են Հյուսիսային Հայաստանի մարզերի հնավայրերում»[2]:

Արծ. Սահակյանի պարզաբանմամբ՝ «Թևավոր խաչերի պաշտամունքի ձևավորումը եկեղեցուց է սկսվել, նրա առաջին արձագանքները գտնում ենք հոգևոր և աշխարհիկ պաշտոնական շրջանակներում (4-7-րդ դդ.) … Թևավոր խաչը կանգնեցնում էին իբրև Տիրոջ փայտի նշան և երկրպագում էին հենց դրա համար»[3]: Նրա բնութագրմամբ՝ «Թևավոր խաչը, լինի փայտից, քարից, թե այլ նյութից, երբ կանգնեցվում է, ասենք, որևէ ճամփաբաժանում, սահմանագծի վրա կամ հրապարակում, ընկալվում է իբրև խաչի նշան, նա անմիջականորեն այդ խաչը չէ, այլ նրա պայմանական նշանը, որը պետք է ցույց տա մեր և իսկական Քրիստոսյան խաչի միջև եղած հաղորդակցությունը, նրա հանդեպ մարդու ունեցած երկյուղածությունը»[4]:

Անդրադառնալով թևավոր խաչերին՝ Հ. Պետրոսյանը գրում է. «Խաչքարերին զուգահեռ գոյատևած թևավոր խաչերն ավելի ճիշտ է անվանել խաչքարեր, քանի որ դրանք հորինվածքների զարգացման, խաչի արտաքին ուրվագծի, կոթողի գործառույթի ու արձանագրական տեքստերի առումով ենթարկվում են խաչքարային մշակույթի զարգացման օրինաչափություններին: Այս տեսակետից դասական կարելի է համարել Տավուշից հայտնի 12-13-րդ դարերի թևավոր խաչքարերը, որոնք երբեմն կրում են շքեղ հորինվածքներ ու խաչահատումից ներքև կամ խաչքարի թիկունքին տեղադրված ընդարձակ արձանագրություններ: Ծավալային լուծման առումով էլ, թվում է, որևէ խնդիր չկա, քանի որ դրանք արտապատկերում են ժամանակի խաչքարային հորինվածքների հիմնական խաչաձևերը, միայն առանց խաչահիմքից դեպի հորիզոնական թևերը բարձրացող ծավալային արմավազարդերի, որոնք վաղ թևավոր խաչերի բնութագրական տարրերից էին»[5]:

Հաղարծնաձորի՝ քննության ենթակա կոթողի թևերի հատման ակնի հավերժության գնդիկավոր նշանից անմիջապես ներքևում և խաչի բնին 13 տողով փորագրված է հետևյալ արձանագրությունը.

ԱՐՂՈՒՆ ԽԱՆԻՆ,/ Ի ԹՎ[ԻՆ] :ՉԼԶ: (1287), ՅԱՇԽԱՐ/ՀԱԿ[Ա]ԼՈՒԹԵ ԵՒ Խ/ՈՒԹԼՈՒԲՈՒՂԻՆ ՍՊԱՍԱԼ/ԱՐԻՆ, ԵՍ՝ ԹԱՐԲԷԿ, ԽՈՒԹԼ/ՈՒԲԷԿ, ԷԼԲԷԿ, ՋԱՒԼԲԵԿ/ ԵՂԲԱՐՔ, ԿԱՆԳՆԵՑԱՔ Զ/ԽԱՉՍ ԱՐՁԱՆ ԼՈՒՍՈ ԾՆ/ՈՂԱՑ ՄԵՐՈՑ՝ ԲԵԿԻՆ/ ԵՒ ՄԱՄՆԻՆ: ՈՐՔ ԵՐԿՐՊ/ԱԳԷՔ, ԱՍԱՑԷ՛Ք՝ ՔՍ ԱՇ/ ՈՂՈՐՄԻ

[2] Նույն տեղում, էջ 270:

[3] **Ա. Սահակյան**, Հայ միջնադարյան ժողովրդական մշակույթի խնդիրներ, 1. Հեքիաթ, 2. Խաչքար: Գիրք 1-2, Եր., 2017, էջ 118-119:

[4] Նույն տեղում, էջ 112-113:

[5] **Հ. Պետրոսյան**, Խաչքար: Ծագումը, գործառույթը, պատկերագրությունը, իմաստաբանությունը, Եր., 2008, էջ 86:

ԲԷԿԻՆ ԵՒ ՄԱՄ/ՆԻՆ, ԱՄԷՆ[6]:

Ա. Գրիգորյանի դիտարկմամբ՝ «Վերջին տարիների նորահայտումները մեկ անգամ ևս փաստում են, որ Հայաստանում թևավոր խաչքարեր ամենից շատ կերտվել են հս շրջաններում»[7]: Նա ՀՀ Լոռու մարզի Եղեգնուտ, Լորուտ, Շամուտ, Աթան, Ահնիձոր գյուղերի տարածքում գրանցել է XIII-XIV դդ. թևավոր խաչքարեր[8]: Նշված գյուղերը հեռու չեն Հաղարծնի վանքից:

Արձանագրությունն սկսվում է անսովոր շարադասությամբ. իրականում պետք է լիներ՝ Ի ԹՎ :ՉԼԶ: ԱՐՂՈՒՆ ԽԱՆԻՆ ՅԱՇԽԱՐ/ՀԱԿԱԼՈՒԹԵ…կամ՝ Ի ԹՎ :ՉԼԶ: ՅԱՇԽԱՐ/ՀԱԿԱԼՈՒԹԵ ԱՐՂՈՒՆ ԽԱՆԻՆ…: Հավանաբար վարպետը, փորագրությունն սկսելով Ի ԹՎ :ՉԼԶ: պարբերությունից և հասնելով մինչև Խ/ՈՒԹԼՈՒԲՈՒՂԻՆ անվան «Խ» տառը, նկատել է, որ բաց է թողել մոնղոլ աշխարհակալ տիրակալի՝ ԱՐՂՈՒՆ ԽԱՆԻ հիշատակությունը և այն ավելացրել թվականից առաջ՝ ամենավերևում: Բայց դա ամենևին չի ստվերում խաչքարը, որը կատարողական բարձր վարպետությամբ ու հիշատակագրության ընդարձակությամբ եզակի է խաչքարային արվեստի հորինվածքային այդ տեսակի մեջ:

Արձանագրությունում հիշատակվող անձանցից հայտնի են Արղուն իլխանը (1284-1291) ու Խութլուբուղան: Առաջինը թոռն էր մոնղոլ Մանգու մեծ խանի եղբոր՝ Հուլավու իլխանի (1256-1265): Վերջինս մեր տարածաշրջա-

[6] Տե՛ս **Ա. Քալանթարյան, Հ. Մելքոնյան, Գ. Սարգսյան,** նշվ. աշխ., էջ 272-273: Գրչանկարը՝ գեղանկարիչ Գևորգ Համբարձումյանի:

[7] **Ա. Գրիգորյան**, Հայտնաբերումներ հանրապետության մարզերում, «Հուշարձան», ԺԱ, ՀՀ ՄՆ պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի տարեգիրք, Եր., 2016, էջ 78-79:

[8] Տե ս նույն տեղը, էջ 77-78:

նի մոնղոլական կուսակալության՝ իլխանության (1256-1344) հիմնադիրն էր: Երկրորդը հայոց և վրաց ամիրսպասալար ու աթաբեկ Խութլուբուղա Արծրունին է (1287-1291)՝ հռչակավոր Սադունի որդին, Մահկանաբերդի ու Կայենի ավատատերը:

Խութլուբուղային հաջորդող բառը՝ «սպասալ/արին», արձանագրության առաջին մեծարգո հրատարակիչները կարդացել են «Սանաս/արին»[9], ինչը չենք վիճարկում, քանի որ բնագրի այդ հատվածի վերծանությունը եղծվածության պատճառով դժվարություն է հարուցում:

Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ Հաղարծնաձորի թևավոր խաչքարը, մեր կարծիքով, կանգնեցվել է Խութլուբուղայի՝ հայոց իշխանապետի բարձր պաշտոնն ստանձնելու թվականին՝ 1287-ին. կոթողի պատվիրատու նրա ենթակաները կարծես ողջունել են իրենց պատրոնի նշանակումը: Նույն թվականին երկու տիրակալ անձինք միասին հիշատակվում են նաև Երևանի Ավանի տաճարի վիմագրերից մեկի սկզբնամասում.

⌈Թ⌉ՎԻՍ :ՉԼԶ: (737+551=1287), ՅԱՇԽԱՐ/ՀԱԿԱԼՈՒ͞ԹԵ ԱՐՔԱՅԻՑ ԱՐՔԱՅԻՆ Ա/ՐՂՈՒՆԻՆ: ԵՍ ԱԹԱԲԱԿ ԵՒ ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ ԽՈՒԹԼՈՒԲՈՒՂԱՅ, ՈՐ/ԴԻ ԱԹԱԲԱԿ ԵՒ ԱՄԻՐՍՊԱՍԱԼԱՐ ՍԱԴՈՆԻՆ…[10]:

Հաղարծնաձորի արձանագրությունում Խութլուբուղայի կոչումների ոչ ամբողջական հիշատակությունը պայմանավորված է խաչքարի վրա փորագրության համար նախատեսված մակերեսի սահմանափակությամբ, ուստի արդարացված կարելի է համարել այդ թևավոր խաչը կանգնեցնող չորս եղբայրների հարգանքի «թերացումն» իրենց պատրոնի նկատմամբ:

Ուշագրավ է, որ բոլոր եղբայրների անվան երկրորդ արմատը «բէկ» կամ «բեկ» բառն է, որն ունի թյուրքական ծագում և բառացի թարգմանվում է «իշխան»: Ստ. Մալխասյանցի բացատրությամբ՝ **բեկ (բէկ, բէյ)** նշանակում է. «Թուրքերի մէջ յարգական տիտղոս բարձր աստիճանաւորի, ազնուականի»[11] նկատմամբ: Չորս եղբայրների դեպքում «բէ(ե)կ»-ը նրանց հոր՝ Բեկի անվան կրիչն է իրենց անվանաձևերում, որոնցից յուրաքանչյուրն իմաստավորված է: Այսպես, ավագ եղբայրը կրում է **Թարբէկ** անունը (պետք է ընդունել, որ արձանագրությունում եղբայրների անունները հիշատակված են թերևս ավագից կրտսեր հերթականությամբ): Այդ անձնանունը չի հանդիպել Հր. Աճառյանին, բայց

[9] Տե՛ս նույն տեղը, էջ 273:

[10] **Կ. Ղաֆադարյան**, Էջեր հայոց միջնադարյան մշակույթի պատմության, Եր., 2007, էջ 200:

[11] «Հայերէն բացատրական բառարան», կազմեց Ստ. Մալխասեանց, հ. I, Եր., 1944, էջ 367:

նրան հայտնի է **Թարխանը**, որ է արաբ. طرخان tarxan և նշանակում է «վեզիրից (նախարարից՝ وزير –Ա. Մ.) ավելի բարձր մի աստիճան»[12]: Եթե ընդունենք այդ անվան երկրորդ բաղադրիչի՝ «խան»-ի ինչ-որ առումով նույնիմաստությամբ հոմանիշվելը «բէկ»-ին, հետևապես Թարբեկ պետք է հասկացվի «բեկից (իշխանից) ավելի բարձր մի աստիճան»: Եղբայրներից երկրորդը **Խութլուբէկն** է: Անունը կազմված է թյուրք. gutlu «երջանիկ» + beg «իշխան» բառերից[13]: Երրորդ եղբոր անունն է **Էլբէկ**: Դա նույն **Էլբէգի**-ն է, բաղկացած թյուրք. el «ժողովուրդ» + beg «իշխան», որով el - begi-ն ունի «ժողովրդի իշխան» իմաստը[14]: Եղբայրներից վերջինն անվանակոչված է **Զաւլբեկ**: Այս անձնանունը նույնպես հայտնի չէ Հր. Աճառյանին: Կարծում ենք՝ այդ անվանաձևի առաջին բաղադրիչն արաբերեն جل (ջուլլ, ջալլ) արմատն է, որ հայերեն թարգմանվում է «վեհ», «մեծ», հետևապես՝ «մեծ իշխան»:

Այն, որ եղբայրները մեծատոհմիկ են, կասկածից վեր է. երկրի շարքային հպատակներն ի զորու չէին պատվիրելու բարձրարվեստ, մեծարժեք խաչքարեր, հուշակոթողներ: Հաղարծնի վանքի Ս. Գրիգոր եկեղեցու գավթի 1184 թ. արձանագրությունում տեղի սուրբ ուխտի առաջնորդներ, հռչակավոր երաժշտագետ Խաչատուր Տարոնացին ու Սուքիասը հայտնում են, որ տաճարը նորոգել են ՀՐԱՄԱՆԱՒ վրաց (բնագրում՝ ԱՓԽԱԶԱՑ) Գեորգի Գ թագավորի (1155/6-1185) ԵՒ ԻԻՐ ՄԵԾԱՄԵԾ ԻՇԽԱՆԱՑՆ՝ ՍԱՐԳՍԻ, ԱՄԻՐ ՔՐԴԻՆ, ԱՆՏՈՆԻ ՃՂՈՒՆՏԵԼԻՆ, ԵԼԲԵԿԻՆ[15]:

Ս. Ավագյանի ու Հռ. Ջանփոլադյանի ծանոթագրությամբ՝ «Սարգիսը՝ Զաքարիա և Իվանե եղբայրների հայրն է՝ Վրաց ամիրսպասալար Սարգիս Մեծը (1185-1187- Ա. Մ.), Ամիր Քուրդը՝ Արծրունիների իշխանական տոհմի ականավոր շառավիղը, Տփղիսի ամիրան և Մահկանաբերդի իշխանաց իշխանը»[16]:

Անտոնը վրացի է: Ճղունտելին նրա բարձր պաշտոնի վրացերեն անվանման հայկական ձևն է: Ս. Երեմյանի պարզաբանմամբ՝ նա՝ Անտոն Գլոնիստավիսձեն, եղել է Վրաստանի պետական խորհրդի նախագահը՝ նախարարների նախարարը և պաշտոնավարել է 1179-1184 թթ.[17]:

Ինչ վերաբերում է մեծամեծների շարքի վերջին իշխանին՝ Ելբեկին, ապա նա Ս. Երեմյանին հայտնի չէ, բայց անվան թյուրքաթաթարական ստուգաբանությունից ելնելով («քոչվոր ցեղի առաջնորդ»՝ «քոչ-

---

[12] **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Բ., Եր., 1944, էջ 285:

[13] Տե՛ս նույն տեղը, էջ 556:

[14] Տե՛ս նույն տեղը, էջ 225:

[15] Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ VI, Իջևանի շրջան, կազմեցին Ս. Ավագյան, Հռ. Ջանփոլադյան, Եր., 1977, էջ 37: Այսուհետև՝ «Դիվան», պր. VI և էջը:

[16] Նույն տեղում, էջ 38:

[17] Տե՛ս **Еремян С.** Агарцинская надпись 1184 г. // "Исследования по истории культуры народов Востока. Сборник в честь академика И. А. Орбели". М.- Л., 1960, էջ 85:

վոր ցեղի զինվորական ջոկատի առաջնորդ», «ցեղի առաջնորդ»), նրան ենթադրում է ղփչաղ և նույնացնում Վրաստանի ամիրսպասալար Խուբասարի հետ, որը նախկինում ղփչական զորաջոկատների առաջնորդն էր, այսինքն՝ էլ-բեկը՝ ուղիղ իմաստով և գուցե եղել է նրա ժառանգական տիտղոսը, որպիսով հայտնի էր իր ցեղակիցների շրջանում[18]: Ս. Երեմյանն իր ենթադրությունը շատ հետաքրքրական է համարում, որը, սակայն, ինչպես ինքն է ասում, պահանջում է լրացուցիչ փաստարկներ դրա հիմնավորման համար:

Դժվար թե երբևիցե հայտնաբերվեն Ս. Երեմյանի տեսակետի օգտին խոսող փաստեր, քանի որ Ելբեկը ղփչաղ չէ, այլ՝ հայ և այն էլ Հաղարծնաձորի թևավոր խաչի արձանագրությունում հիշատակվող անձանց նախնին, ինչը հուշում է անվան կրկնությունը: Դեռ ավելին, վիմագրերի համեմատական քննությամբ պարզվում է (դա փաստում են արձանագրության առաջին հրատարակիչները[19]), որ հիշատակվող անձինք Հարբանց տոհմի ներկայացուցիչներ են (տոհմանվան հիմքում արաբ. حرب «հարբ»=«պատերազմ», «պատերազմել» բառն է և ըստ Հ. Աճառյանի՝ նշանակում է «կտրիճ», «քաջ», «ռազմիկ»[20]): Այսպես, Նիգ պատմագավառի Աստվածընկալ վանքի Ս. Կաթողիկե եկեղեցու XIII դ. կեսի շինարարական արձանագրություններից մեկում վիմագրված է.

ԵՍ՝ ԷԼՊԷԿՍ, ՀԱՐՊԻ ՈՐԴԻ…[21]:

Այս հիշատակագրության կապակցությամբ վիմագրագետ Գ. Սարգսյանը մեր կողմից կազմվող ժողովածուի համար իր տրամադրած նյութերի ծանոթությունում գրում է. «Էլպեկի հոր՝ Հարպի անվան եզակիությունը թույլ է տալիս նրան նույնացնելու պատմական Կայեն կամ Սևորդյաց գավառում 12-14-րդ դարերում գործող Հարբանց իշխանական տան ներկայացուցիչների հետ, որոնք Հաղարծնի և Նոր Գետիկի վանքերում քանիցս հիշատակված են որպես շինարարներ և նվիրատուներ: Այս Էլպեկի հիշատակությամբ պահպանվել են ևս երկու վիմագիր. Թեղենյաց վանքում և Արա գյուղում»[22]: Հարբի որդի Էլբեկի՝ Նիգ և Կոտայք գավառներում գործելու փաստերը պետք է դիտվեն որպես Հարբանց մեծ գերդաստանի աճի, ճյուղավորման արդյունք:

Իսկ դիլիջանյան տարածաշրջանային XIII դ. վիմագրերում Հաղարծնաձորի թևավոր խաչքարի արձանագրությունում հիշատակվող անձանց անվան կրկնություն տեսնում ենք չորս եղբայրների հոր՝ Բեկի պարագայում:

---

[18] Տե՛ս նույն տեղը, էջ 85-86:

[19] Տե՛ս **Ա. Քալանթարյան, Հ. Մելքոնյան, Գ. Սարգսյան,** նշվ. աշխ., էջ 273:

[20] **Հ. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Գ., Եր., 1946, էջ 62:

[21] **Մ. վ. Տէր-Մկրտչեան**, Իմ գործակալութեան ժամանակ հաւաքած մի քանի արձանագրութիւններ, «Բանասէր», հ. Ե, Պարիս, 1903, էջ 31:

[22] «Դիվան հայ վիմագրության», Արագածոտնի պրակ, կազմող Ա. Մանուչարյան, ձեռագիր, էջ 433:

Դիլիջան քաղաքից 3 կմ հյուսիս-արևմուտք գտնվող Ջուխտակ վանքի[23] Ս. Գրիգոր եկեղեցում միասին վիմագրված են *Բէկ եւ Բաւ-ռին*[24]: Այս Բեկը Հաղարծնավանքի Ս. Աստվածածին եկեղեցու վիմագրերից մեկում բացահայտում է իր ինքնությունը.

ՇՆՈՐՀԻԻՆ Ա՛Յ , ԵՍ՝ ԲԷԿՍ, ՈՐԴԻ ԱՇՈՏՈՅ ՅԱՋԳԷ ՀԱՐԲԱՆՑ ԵԻ ԱՄՈՒՍԻՆ ԻՄ ԲՈՐԻՆԱ ԵԻ ԵՂԲԱՅՐ ԻՄ ՍՄԲԱՏ ՄԻԱԲԱՆԵՑԱՔ Ի Ս՛Բ ՈՒԽՏՍ ՈՐՊԷՍ ԵԻ ՀԱՅՐՆ ԻՄ ԵԻ ՏՎԱՔ ԱՐԴԻԻՆՍ Ի ՇԻՆՈՒԹԻԻՆ…[25]:

Աշոտի որդի և Բեկի եղբայր Սմբատին, արդեն որպես պարոնի, ևս մեկ անգամ տեսնում ենք Ս. Աստվածածին եկեղեցու շինությանը արդյունքով նպաստելու գործում[26]: Ուշադրության արժանի է Բեկի կնոջ Բաւրինա (Բորինա) անունը: Իշխանուհին հավանաբար անվանակոչվել է ի հիշատակ Մածնաբերդի Կյուրիկե Բ թագավորի (1145-1185) հինգ դուստրերից մեկի՝ Բաւրինայի, որը թաղված է Հաղբատի վանքի մեծ գավթում և վերջին անգամ հիշատակվում է 1212 թվականին[27]: Հետաքրքրական է, որ Բագրատունիների, Կյուրիկյանների տոհմերին բնորոշ անուններ են կրում Հարբանց Աշոտն ու նրա որդի Սմբատը: Եվ դա բնական է, քանի որ ռազմական ճանապարհով պատմության թատերաբեմ իջած Հարբանք, ինչպես երևում է, հայ-վրացական զորքերի կազմում աչքի են ընկել խիզախությամբ, քաջությամբ (այդ երևում է նրանց տոհմանունից) և ամենագործուն մասնակցությունն ունեցել սելջուկ-թուրքերից երբեմնի Տաշիր-Զորագետի թագավորության (979-1113) տարածքներից մեկի՝ Կայեն գավառի և Կյուրիկյանների արքայական դամբարանի (Հաղարծնի վանքի) ազատագրման ժամանակ: Այդ արնագին հողերը վրաց թագավորների կողմից որպես ավատ շնորհվել են Հարբանց իշխաններին, որոնք, իրենց Կյուրիկյանների իրավահաջորդ համարելով ժամանակի մխիթարգոշյան ոգուն համա-

---

[23] Ս. Ավագյանի, Հռ. Ջանփոլադյանի պարզաբանմամբ՝ *«Ջուխտակ վանք* անվանումը ժողովրդական է, մատենագրական աղբյուրներում վանական կենտրոնի մասին տեղեկություններ չկան: Հուշարձանների պատերին փորագրված արձանագրություններում ավանդված է մենաստանի պատմական անվանումը՝ մի դեպքում *Պետրոսի վանք*, մի այլ բնագրում՝ *Գիշերավանք*» («Դիվան», պր. VI, էջ 9): Անշուշտ, Ջուխտակ (Զույգ) վանք կոչվել է համալիրում իրար մոտ գտնվող երկու եկեղեցիների՝ Ս. Աստվածածնի ու Ս. Գրիգորի պատճառով, իսկ՝ Գիշերավանք, հավանաբար մինչև լուսաբաց Պետրոս առաքյալի գիշերային երեք անգամվա ուրացության պատմության (Մատթ. ԻԶ. 34, Մարկ. ԺԴ. 30, Ղուկ. ԻԲ. 34, Յովհ. ԺԳ. 38) կամ էլ մենաստանում ճամփորդներին, օտարականներին գիշերակաց տրամադրելու համար:

[24] Տե՛ս «Դիվան», պր. VI, էջ 13:

[25] Նույն տեղում, էջ 50:

[26] Տե՛ս նույն տեղը, էջ 51:

[27] Տե՛ս «Դիվան հայ վիմագրության», պրակ IX, Լոռու մարզ, կազմեցին Ս. Բարխուդարյան, Կ. Ղաֆադարյան, Ս. Սաղումյան, Եր., 2012, էջ 170: Ուշագրավ է, որ Բեկի կին Մամնայի անունը նույնպես կրկնություն է Կյուրիկե Բ-ի հինգ դուստրերից երրորդի՝ Մամայի, որը կինն էր հռչակավոր Հասան Կրոնավորյալ Հաթերքեցու:

պատասխան, ոչ միայն վերականգնել են Հաղարծնի վանքը, այլև այնտեղ կառուցել նոր եկեղեցիներ, կանգնեցրել փառահեղ հուշարձաններ: Դրանք այսօր էլ մեծ հիացմունք են պատճառում իրենց վեհությամբ ու ինքնատիպությամբ:

Ինչ վերաբերում է Հարբանց Բեկին ու Բորինային, ապա նրանք գործել են Հաղարծնի վանքի Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման ավարտի՝ 1281 թվականին մերձակա տարիներին և ճիշտ ու ճիշտ ժամանակակիցներն են Հաղարծնաձորի թևավոր խաչքարի արձանագրության՝ իրենց ազգակիցներ Բեկին ու Մամնային[28]:

Բանալի բառեր – *միջնադար, Հաղարծնաձոր, վանք, թևավոր խաչքար, վիմագիր, իշխանական տոհմ*

АШОТ МАНУЧАРЯН – ***Вновь о крылатом хачкаре в Агарцинском ущелье***. **–** На втором километре дороги, поднимающейся к Агарцинскому монастырю, по левую сторону стоит крылатый хачкар. Согласно резной надписи, датированной 1287 г., хачкар поставили четыре брата в память о своих родителях. Местный княжеский род Харбанк, к которому они принадлежали, на протяжении XII-XIV вв. оказывал всемерную поддержку и содействие Агарцинскому монастырю.

Ключевые слова: с*редневековье, Агарцинское ущелье, монастырь, крылатый хачкар, надпись, княжеский род*

ASHOT MANUCHARYAN – ***Once Again About the Winged Khachkar at Haghartsin Gorge***. – There is a winged khachkar on the 2nd km of the road taking to Haghartsin Monastery. It stands on the left of the road. According to the inscription, dating back to 1287, it was erected to the memory of the parents by the four brothers. They were the representatives of Harbank princely family. In XII-XIV cc, the princely family sponsored and assisted the activity of Haghartsin monastery.

Key words: *Middle Ages, Haghartsin, monastery, winged khachkar, Inscription, princely family*

[28] Արձանագրության առաջին հրատարակիչները նույնացնում են երկու Բեկերին՝ Մամնային համարելով նրա կանանցից մեկը (տե ս **Ա. Քալանթարյան, Հ. Մելքոնյան, Գ. Սարգսյան,** նշվ. աշխ., էջ 273): Դա չի բացառվում, եթե նկատի ենք ունենում հայ իրականության մի ժամանակաշրջան, երբ երկրի երևելի այրերը (օրինակ՝ Տարսայիճ Օրբելյան) իրենց կարող էին թույլ տալ երկրորդ ամուսնություն անգամ առաջին կողակցի կենդանության դեպքում: